ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանին

Հարգելի մարզպետ Ալավերդի խոշորացված համայնքապետարանը սկսած 2017թ.-ի նոյեմբեր ամսից՝ արդեն 2,6 տարի է քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ չունի:Բաժնի քաղաքաշինության ոլորտի աշխատանքները կոորդինացնում է մասնագիտությամբ ճարտարագետ, գլխավոր մասնագետ Վալերի Մինասյանը: Ալավերդի խոշորացված համայնքի մեջ մտնում են նաև Ծաղկաշատ, Հաղպատ, Ջիլիզա, Աքորի սողանքային Կաճաճկուտ գյուղական բնակավայրերը և Ակներ, Սանահին, Մադան գյուղական թաղամասերը: Համայնքի բնակավայրերում և գյուղական թաղամասերում խոշորացումից հետո գյուղատնտեսության զարգացման, ոռոգման ջրի արդյունավետ օգտագործման և գյուղացիների հողի մշակման համար համայնքապետարանի կողմից որևէ միջոցառում չի ձեռնարկել: Դրան էապես նպաստել է այն հանգամանքը, որ համայնքի գյուղատնտեսության ոլորտի աշխատանքերը կոորդինացնում է բաժնի մասնագիտությամբ ապրանքագետ գլխավոր մասնագետը: Թեև Ալավերդի համայնքը բնապահպանական թեժ գոտի է, այսուհանդերձ համայնքապետարանի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը չունի նաև բնապահպան: Խոշորացումից հետո համայնքապետարանի 31 համայնքային ծառայողների 4 հաստիքներ թափուր են, 27 համայնքային ծառայողներ իրենց պաշտոններում արդեն 2,6 տարի է աշխատում են որպես պաշտոնակատարներ: Ալավերդու համայնքապետարանում նոր կառուցվածքային հիմքով դեռ չի անցկացվել աշխատակազմի կադրերի համայնքային ծառայողների մրցույթներ, որի հետևանքով համայնքապետը աշխատում հին իշխանությունների կադրերով և նրանց պահանջներով: Լրագրողական աշխատանքիս անհրաժեշտությունից ելնելով ՝խնդրում եմ հայտնել՝ 1.Լոռու մարզպետարանը վերահսկու՞մ է արդյոք Ալավերդու համայնքապետարանի գործունեությունը, եթե այո, ինչ միջոցառումներ են ձեռնարկվել խոշորացվելուց հետո կառուցվածքային նոր հիմքով Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի կադրերի ընտրության օրենսդրական պահանջները կիրառելու համար: 2. Տեղյակ ե՞ք Ալավերդու համայնքապետարանի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնում տիրող վիճակին, ինչ աջակցություն է ցուցաբերվել կառավարման գործից անտեղյակ համայնքապետին՝ բաժնի կադրային խնդիրները լուծելու գործում: 3.Ստեղծված իրավիճակում մարզպետարանի կողմից ինչպես է գնահատվում Ալավերդու համայնքապետ Սասուն Խեչումյանի Ալավերդի համայնքի քաղաքաշինության,

գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտների լիազորությունների կատարումը:

Հարգանքով՝ <Հետք> էլեկտրոնային թերթի Լոռու մարզի թղթակից Լարիսա Փարեմուզյան 04.06.2020թ. ք. Ալավերդի